Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն 3

2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ ԵՎ ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՆ ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՀ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Դ. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Ա. Հովհաննիսյան	ՀՀ արդարադատության նախարար
Գ. Խաչատրյան	ՀՀ ֆինանսների նախարար
Վ. Մանուկյան	Հանրային խորհրդի նախագահ
Ս. Սահակյան	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահ
Մ. Մելքումյան	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ներկայացուցիչ

Հրավիրվածներ՝

Պ. Սվիտալսկի	ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան
Ս. Կարայան	ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի առաջին տեղակալ
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ
Պ. Սաֆարյան	ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ
Ա. Առաքելյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
Գ. Արզումանյան	ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական

Ա. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի տեղակալ
Ն. Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Ա. Խուդավերդյան	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ս. Վասիլյան	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի տեղակալ
Կ. Իսախանյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
Հ. Հակոբյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ
Տ. Բարսեղյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Վ. Պողոսյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Ա. Նազարյան	ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
Ա. Բաղալյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Խ. Հակոբյան	ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
Գ. Թադևոսյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
Կ. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Շ. Հարությունյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ա. Հարությունյան	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ
Վ. Եղիազարյան	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ
Խ. Կարայան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ
Վ. Գասպարյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ

Գ. Պողոսյան	ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար
Լ. Շուշանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի խորհրդատու
Ա. Կիրակոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավար
Ս. Հակոբյան	ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության աշխատակազմի ղեկավար
Մ. Բաղդասարյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմի ղեկավար
Շ. Ավագյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի ղեկավար
Ս. Մուրադյան	ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի ղեկավար
Ֆ. Զաքարյան	ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար
Է. Շախկյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Ա. Բաբայան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի գործարար միջավայրի բարելավման վարչության պետ
Ա. Հովսեփյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
Ա. Չիլինգարյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակզմի տնտեսական զարգացման քաղաքականության վարչության պետ
Թ. Թորոսյան	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության պետ
Կ. Ասատրյան	ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի

	պետ
Ռ. Փիլոյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Ա. Կարմիրմիրուքյան	ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի պետ
Ա. Ավետիսյան	ՀՀ պաշտպանության նախարարի ավագ օգնական
Ա. Աբրահամյան	<<Հայաստանի համայնքների միություն>> իրավաբանական անձանց միության վարչության անդամ, Արթիկի քաղաքապետ
Մ. Գյուլումյան	ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի փորձագետ
Մ. Թովմասյան	ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի փորձագետ
Լ. Խաչատրյան	ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի փորձագետ
Տ. Աբրահամյան	«Տեղեկատվության և վերլուծության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Գ. Մակարյան	«Հայաստանի գործատուների հանրապետական միության» նախագահ
Կ. Զադոյան	«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Լ. Դոյդոյան	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ
Ն. Առաքելյան	«Արմավիրի զարգացման կենտրոն» սոցիալ-տնտեսական ՀԿ-ի գործադիր տնօրեն
Վ. Հոկտանյան	«Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի գործադիր տնօրեն

Գ. Նալբանդյան	«Արազա» ՀԿ-ի նախագահի տեղակալ
Ս. Այվազյան	«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի փոխտնօրեն
Մ. Հովհաննիսյան	«Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի ծրագրի ղեկավար
Մ. Ատովմյան	«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի վարչության անդամ
Ս. Պետրոսյան	«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի անդամ
Մ. Զադոյան	«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի փորձագետ
Ա. Մքֆարլենդ	Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության առաքելության ղեկավարի պաշտոնակատար
Ա. Զանոտտա	ԵՄ պատվիրակության ծրագրի ղեկավար
Ա. Մովսիսյան	Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության ծրագրի ղեկավար
Ն. Գյուլնազարյան	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող
Դ. Մելիքյան	Համաշխարհային Բանկի պետական կառավարման ավագ մասնագետ

1. Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ նոր համակարգի ներկայացում

(Կարեն Զադոյան, Արփինե Հովհաննիսյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանին՝ 2-ամսյա ժամկետում բազմակողմանի քննարկել առաջարկված մոդելները, ուսումնասիրել հակասությունները, ևս մեկ անգամ վեր հանել դրական ու բացասական կողմերը և, անհրաժեշտության դեպքում ներգրավելով

քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կամ միջազգային փորձագետների ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել առաջարկություն:

2. Պետական գնումների ոլորտում իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրման և օֆշորային գոտիներից պետական գնումներին մասնակցության արգելքի սահմանման հարցի ներկայացում

(Կարեն Զադոյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանին՝ 2-ամսյա ժամկետում ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել օրենսդրական փաթեթ:

3. «Օտարումների գործընթացի օրինականության ապահովում» և «Աճուրդների իրականացման գործընթացը տեղական ինքնակառավարման մարմիններում» հետազոտությունների ներկայացում

(Սառա Պետրոսյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայության պետ Սարգիս Գրիգորյանին՝ աճուրդների հրապարակայնության, դրանց ընթացակարգերի խախտումների, օրենսդրական ակտերի չկատարման մասով կատարել ուսումնասիրություններ և կոնկրետ փաստերն ու առաջարկությունները ներկայացնել ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանին:

2) հանձնարարել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանին և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի-նախագահ Մարտին Սարգսյանին՝ հաշվի առնելով ներկայացված բոլոր փաստերը և բացթողումները, 2-ամսյա ժամկետում ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որը ևս մեկ

անգամ կքննարկվի շահագրգիռ բոլոր կողմերի հետ ու սահմանված կարգով կներկայացվի ՀՀ Ազգային ժողով:

4. «Պաշտպանության համակարգի հակակոռուպցիոն համաթիվ 2015թ.» գլոբալ ուսումնասիրության շրջանակներում Հայաստանի Հանրապետության պաշտպանության համակարգի ռիսկերի գնահատման ներկայացում.
   - ՀՀ պաշտպանության նախարարության ոլորտում Հյուսիսատլանտյան դաշինքի հետ համագործակցության շրջանակներում իրականացվող բարեվարքության (բարեխղճության) ամրապնդմանն ուղղված գործողությունների ծրագրի ընթացքի ներկայացում

(Սոնա Այվազյան, Արա Նազարյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի փոխտնօրեն Սոնա Այվազյանի և ՀՀ պաշտ-պանության նախարարի տեղակալ Արա Նազարյանի զեկուցումները:

5. Ապօրինի հարստացման քրեականացման վերաբերյալ ուսումնասիրությունների ներկայացում.
   - Բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից իրականացվող կանխիկ գործարքների ինստիտուտի կիրառման հնարավոր սահմանափակումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում

   - Հայտարարագրման ինստիտուտում առկա բացերի ներկայացում

(Կարեն Զադոյան, Ներսես Երիցյան, Սիրանուշ Սահակյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանին՝ 2-ամսյա ժամկետում հասարակական կազմակերպությունների հետ մշակել օրենսդրական փաթեթ և ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

2) առաջարկել ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանին 2-ամսյա ժամկետում շրջանառել կանխիկ գործարքների սահմանափակումների

վերաբերյալ օրենքի փաթեթի նախագիծը, քննարկել նաև հասարակական կազմակերպությունների հետ և ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

3) առաջարկել ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահ Սիրանուշ Սահակյանին 2-ամսյա ժամկետում ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել հայտարարագրման նոր մեխանիզմների և նոր թիրախային խմբերի ներգրավման վերաբերյալ առաջարկություններ:

6. ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1141-Ն որոշման 4-րդ կետով սահմանված Հանրապետական գործադիր մարմինների տարեկան հաշվետվությունների ամփոփում

(Դավիթ Հարությունյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանին՝ մինչև տարեվերջ մշակել պետական կառավարման մարմինների գործունեության տարեկան հաշվետվությունների գնահատման մեթոդաբանության և մոնիթորինգի միասնական մեխանիզմ:

7. Հայտեր ներկայացրած միջազգային փորձագետների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում

(Դավիթ Հարությունյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանի տեղեկատվությունը՝ հայտեր ներկայացրած միջազգային փորձագետների վերաբերյալ:

8. Միջազգային երկու փորձագետների հետ կնքվող պայմանագրերի նախագծերի ներկայացում

(Դավիթ Հարությունյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հավանություն տալ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանի զեկույցին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԿԱՄՈ ԱՍԱՏՐՅԱՆ